



ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ՔՈՒՆ

HYPNOTISME

(Շար. տես էջ 187)

ԳԼՈՒԽ Գ

Կարելի՞ է մագնիսական քնոյ ենթարկել զոք հակառակ իրեն կամաց :

ԱՅՈՒ Դժուարին խնդիրը պարզապէս այդ կամ ոչ¹ ըսելով չի լուծուիր, ինչպէս որ զիտել կու տայ Լիլիէնիալ, Յուրիի իրաւագործութեան Հմուտ ուսուցիչն. և յաջորդ տողերս ալ պիտի հաւաստեն անոր ըսածը. «Պէտքէս զրեւոյ՞ թէ «Ոչ որ կրնայ մագնիսական քնոյ ենթարկուիլ հակառակ իւր կամաց, եթէ կ'ընդդիմանայ թեւադրութեան : Ուրախ եմ որ այս մասին կրնամ ապահովցնել զամենքը հակառակ ամէն ցնուրական երկիւղի²», ակամայ կերպով մեր միտքը կը ձգէ այն բժիշկը, որ լրջութեամբ մի և հանդիսապէս իրեն հիւանդին կը պատուիրէ հացի փշրանաց զեղահատ մը, և կը նախապուշակէ անոր անվրէպ բժշկութիւնը : Երբայի, ինչպէս պիտի ապահովենայ որ՝ քանի որ կ'ըսուի պարզապէս. «Ոչ որ կրնայ մագնիսական քնոյ ենթարկուիլ հակառակ իւր կամաց, եթէ կ'ընդդիմանայ թեւադրութեան» : — Երբ կ'ընդդիմանամ քեւադրութեան, պիտի չենթարկուիմ մագնիսական քնոյ. շատ լաւ : Սակայն զժուարութիւնն յայնմ է որ արդեօք պիտի կարենամ միշտ ընդդիմանալ, և թէ՛ արդեօք ա-

մէն որ պիտի կարենայ ամէն պարագայի մէջ հակառակ կենալ մագնիսական քնոյ թեւադրութեան. Գրանի որ հաւաստի փորձ կամ փաստ մը չունիմ՝ թէ պիտի կարենամ միշտ ընդդիմանալ, երբեք պիտի չկարենամ ապահով ըլլալ :

Եւ եթէ չար է ամէնուն սրտին վրայ սաստիկ վտի ազդելն՝ մագնիսական քնոյ և մագնիսացուցաց զօրութիւնը չտաքառնոց մեծցրենելով, չարագոյն եւս է՝ այս մասին կատարեալ ապահովութիւն քարոզելն, որուն շատերն զուցէ զոհ ըլլան : Յայնմ եւս, ինչպէս ամէն բանի մէջ, լաւագոյն է ըսել ճշշմարտութիւնը :

Այդ, ըստ այս ճշմարտութեան՝ ամէն մարդ չի կրնար միշտ ընդդիմանալ քնածին կամ քնաբեր ազդեցութեանց կամ ներգործութեանց՝ որոնց կ'ենթարկուի : Յայտնի է թէ նախիկ նշանաւոր ուսուցիչն եւս պիտի համաձայնի մեզի այս մասին մէջ, ինչպէս ստույգ կը համարիմ՝ թէ Պրէտ՝ քառասուն տարի առաջ զրածը պիտի չգրէր այսօր, այսինքն. «Մագնիսական վիճակն իւր շրջանաց և ոչ միոյն մէջ կրնայ սահմանուիլ՝ եթէ անոր ենթարկուած անձին հաւանութիւնն չըլլայ... Ոչ որ կրնայ երբեք ենթարկուիլ այդ քնոյ՝ առանց իրեն ազատ հաւանութեան³» :

Ա

Տօգդ. Արիերտ Մօլ, որուն մեծ հեղինակութիւնը մագնիսութեան մասին՝ ամէն որ կը ճանչնայ, կը գրէ այսպէս. «Յաճախ մագնիսական քնոյ ենթարկուած անձանց շատերն կրնան հակառակ իսի իրենց կամաց ենթարկուիլ նոյն քնոյ, առանց ամեն նշանի իրենց կողմանէ ազդեցութիւն մ'ընել, իւր անոր վրայ. այս՝ անտարակոյս է, kann nicht bezweifeln werden⁴» : Երբայի, ստույգ է՝ որ յաճախ մագնիսացընելով ենթակայ մը՝ մագնիսացընողն զրեթէ բացարձակապէս կը տիրէ նոյն ենթակային վրայ :

1. Der Hypnotismus und das Strafrecht, p. 86 :

2. De la suggestion, etc. p. 278 :

3. Neurypnologie, p. 18 :

4. Der Hypnotismus, p. 33 :

Թուի թէ Պրէտ եւս այս ճշմարտութիւնը
զուշակելով՝ զրաժ է հետեւեալ խօսքերը¹.
«Դիտելի է՝ որ որչափ աւելի յաճախ մազ-
նիսանայ ոք՝ այնչափ յարմարագոյն կ'ըլլայ
առ այն»։ Եւ այնչափ յարմար կ'ըլլան՝ որ
շատերն կամաց կամաց՝ ընդդիմութեան և
ոչ փոքր ցոյց կամ նշան մը կու տան, և
դոյզն նշանով կամ բառով մը կը քնանան,
ոչ միայն իրենց կամաց, այլ նոյն իսկ մազ-
նիսացընողին կամաց հակառակ։ Փոքրոնկել՝
առաջին անգամ որ մագնիսութեան մը ներ-
կայ գտնուեր է, ճիշդ այդպիսի գէպքի հան-
դիպեր է՝ զոր այսպէս կը պատմէ. «Մագ-
նիսացուցիչ բժիշկ մը՝ որ շատ կը փափա-
քէր՝ որ մագնիսական քնոյ վրայ ուսումնա-
սիրութիւններ ընեմ, առաջարկեց ինծի՝ որ
իմ ներկայութեամբ քնացընէ մի քանի
հոգիներ։ Յօժարափոյթ յանձն առի առաջ-
արկը. և սահմանեալ օրուան ու ժամուն
գտնուեցայ ագնի բժշկին քով. առանձին
կերպով ուրողուած խիւանդն փութով եկաւ,
և մապիւր սիրով զիջաւ՝ որ կարենամ ներ-
կայ ըլլալ այս գործողութեան։ Ստամբաց
Հիւանդութիւն մ'ունէր, և գրեթէ վեց ամիս-
ներ է ի վեր, շաբաթը երեք անգամ կանո-
նաւոր կերպով մագնիսական քնոյ ենթար-
կուած էր։ Բժիշկը նախ հարցուց՝ թէ նախ-
ընթաց երկու օրերը ի՞նչպէս անցուց, և
ապա նստեցընելով զինքը բազմոցի մը վրայ՝
պատարաստուեցաւ մագնիսացընելու։ «Ո՛հ,
ըսաւ ինձ, չէի մտածած զայդ. ապահովա-
պէս սա պիտի քնանայ ակնթարթի մէջ, ա-
ռանց ժամանակ տալու ինծի՝ որ քեզի ցու-
ցընեմ մագնիսացընելու կերպը»։ Եւ իրօք,
Հիւանդն նստաւ ու քնացաւ, և այնպէս խո-
րին կերպով՝ որ բժիշկը զօրաբարութիւն կրեց
զինքը արթնցընելու համար, թէպէտեւ վեր-
ջապէս արթնցուց։ Եւ յետոյ եւս՝ Հիւանդն
ժամանակ չառաւ բժշկին որ գործադրէ իւր
դրութիւնը, այլ երկրորդ քունը սկսաւ. —
և քանի որ քնանալու խնդիր եղաւ՝ քնացաւ
նա հակառակ թէ՛ իւր և թէ՛ բժշկին կա-

մաց, այնպէս որ այդ օրն շատ լաւ սորովե-
ցայ՝ թէ ի՞նչպէս արթնցընելու է, բայց ոչ
ինչ կրցայ սորովիլ քնացընելու մասին²»։

Պօնի այ Սկրբա Մօլլին պէս կը խօսի
ներկայ խնդրոյ վրայ. «Մի քանի անգամ
քնացողներէն, կ'ըսէ նշանաւոր քնախօսն,
միշտ կան ումոնք՝ (յայտնի է՝ թէ ոչ ա-
մէնքը, վասն զի քնանալու սրամագնիսութեան
և դիւրութեան մէջ ալ աստիճաններ կան)
զորս կարելի է մագնիսական քնոյ ենթարկել
հակառակ իրենց կամաց. Եւ ասոնք՝ զիրենց
սովորաբար քնացընողին իշխանութեան ներ-
քոյ են բացարձակապէս. և իրենց կողմանէ
որ և է ընդդիմութեան անկարելի է. այս կրնան
մագնիսացընողին ներկայութեանէ հեռանալ,
բայց նա ուրիշ միջոց կրնայ գտնել զիրենց
քնացընելու համար... Անօգուտ է այս իրո-
շտութեան ծանրութիւնը նուազեցընել, մա-
նաւանդ թէ լաւագոյն է իրականութիւնը ըսել.
և այս իրականութիւնն, մի քանի գիպուա-
ծոց մէջ, է մագնիսացընողին բացարձակ
իշխանութիւնը մագնիսացընելոյ վրայ³»։

Ոգբորովիչ այս գաղափարը կը հաստատէ
հետեւեալ զուարճալի միանգամայն ապացու-
ցական պատմութեամբ. «Քննաշրջիկ մը շատ
ժամանակ է ի վեր մագնիսացած չըլլալուն
համար կը կարծէր՝ թէ իւր զգացողութիւնը
կորուսեր է։ Սա օր մը ինծի հետ գտնուե-
լով ընկերութեան մը մէջ ըսաւ ինձ՝ իրեն
համար թէ Այսօր այնչափ զօրաւոր եմ՝ որ
կ'ուզեմ զքեզ իսկ մագնիսացընել. Յանձն
առի այս խաղը, և թոյլ տուի՝ որ փորձէ
ուզածը, և իսկ նա իմ զիջողութեանս վրայ
սաստիկ ուրախացած՝ բռնեց բաւժ մատերս,
և սկսաւ իւր նայուածքը սեւեռել աչացս մէջ.
Ես ալ զինքը աւելի զուարճացընելու հա-
մար, կեղծեցի իրեւ թէ քուր տիւրեց վրաս.
— ապա յանկարծ բացի աչքերս և սեւեռեցի
իրեն վրայ՝ զինքը քնացընելու դիմամբ, —
և նա մի վայրկեան ետքը քնացաւ։ Այս
փորձը զրեթէ երեք քառորդ ըրի իրեն վրայ.
իրեն առջեւ կեցած՝ փշելով կ'արթնցընէի

մէջ. էջ 233. — Եւ աւելի զարմանալի և հե-
տաքրքրաշարժ դէպքեր ալ կը պատմուին։

3. Le somnambulisme provoqué, p. 55.

1. *Neurypnologie*, p. 40.

2. Ch. Richet ալ գրեթէ նմանօրինակ դէպք
էր կը պատմէ, *L'homme et l'intelligence*, զրոյցը

զինքը, և ապա քնանալ կը ձեռացընէի: Եւ նա կարծելով՝ թէ իրօք քնացեր եմ՝ սկսաւ ծափահարելով՝ « յաղթեցի » աղաղակել, և չկրցաւ հասկնալ որ ինչո՞ւ բոլոր Հոն ներկայ եղողներն սաստիկ կերպով կը ծիծաղէին: Եւ չհաւատաց որ ինքն էր քնացոյցն՝:

թ

Եայ ուրեմն մարդկանց դասակարգ մը՝ որ հակառակ իրենց կամաց կրնան մագնիսական քնոյ ենթարկուիլ. և այս դասակարգէն ալ յաճախ մագնիսացողներէն շատերն չեն կրնար իսկ ընդգիմանալ քնոյ լեռնադրութեան:

Բայց Բիչ ըսելու է անոնց նկատմամբ՝ որք երբեք մագնիսական քնոյ չեն ենթարկուած: Այս հարցմանու պատասխանելէն առաջ՝ հարկ է երկու դասերու բաժնել զատոնք. առաջին՝ որոյ մէջ են սովորական և կանոնաւոր զգայնութիւն ունեցող անձինք. երկրորդ՝ որոյ մէջ կը բովանդակուին արտաքոյ կարգի և անկանոն զգացողութիւն ունեցողք: Նոյն՝ այս երկրորդ դասուն վրայ խօսինք:

Արտաքոյ կարգի և անկանոն զգացողութիւն ունեցող անձանց մէջ կը պարունակուին՝ օրըստօրէ աճող բազմութիւն մը ջղայիններու, և մասնաւորապէս արգանդախեղդ ունեցողներու:

Անտարակոյս է՝ որ ջղացաւ մանաւանդ արգանդախեղդ ունեցողներու մեծ մաս մը կրնան հակառակ իրենց կամաց ենթարկուիլ մագնիսական քնոյ: Այս ճշմարտութիւնը կը հաստատեն քաջածանօթ իրողութիւնք: Յիւրաքանչեւ, մի չէ կարգացած մասնագիտական գրոց մէջ՝ խեղճ աշխատք մը պատմութիւնը որ չէր կրնար ոչ կտրել, ոչ սաղնագործել, վասն զի հազիւ թէ իւր գործոյն վրայ կը սեւեռէր աչքը, բուն ալ կը տրէր վրան, — դարձեալ՝ այն կնիշ զէպքը, որ հայելոյն մէջ նայելուն պէս կը քնանար, — որիչ կնիշ՝ որ ուղղագարութեան մէջ կ'իյնար՝ ջրոյ ողորկ և յղկեալ սառին վրայ նայելով, — այն կանանց՝ որոնք, ինչպէս կ'ըստի, իրենք զիրենք կը կորսնցնեն, երբ բազմութեան մէջ

կը լսեն արուեստական կրակի առաջին փամփուշտները, զինուորական փողին ձայնը, — այն անձանց պատմութիւնը, որք կը քնանան՝ եթէ իրենց երեսին վրայ ելեկարական լուսող ճառագայթ մը արձակուի, կամ մաքուր մը մը մօտեցընենք անոնց մարմինն:

Վալըէր, Պրէտի ընկերն, չափազանց զգացողութիւն ունենալուն պատճառաւ, ինքն կը քնանար՝ մինչդեռ կը ջանար քնացընել զայս: Ինքն Պրէտ կը պատմէ զայս, մինչ քիչ առաջ կարգացինք իրեն ըսածը, թէ « Ոչ որ կրնայ ենթարկուիլ երբեք մագնիսական քնոյ առանց ազատ հաստութեան »: Ահաւաստիկ վալըէրին գէպն հետեւեալն է.

« Թամին 1842 մարտ 1ին ի Լոնտրոն ճառախօսութենէս ետքը, կը գրէ Պրէտ, մարդ մը եկաւ առ Վալըէր՝ որ հետս էր, և ըսաւ Վալըէրին՝ թէ կը փափաքէր և կը խնդրէր ինծմէ (Պրէտէն) որ փորձէր քնացընել զինքը, և տեսնէր թէ պիտի յաջողէր: Այս մարդը շատ կը փափաքէր ենթարկուիլ այս փորձոյն, և իրեն բարեկամաց ալ փափաքն այդ էր. բայց յառաջագոյն ոչ լափոնդէն, և ոչ այլք չէին կրցած քնացընել զինքը շատ փորձեր ընելով հանդերձ: Վալըէր պատասխանեց այցելուին թէ ես (Պրէտ) զբաղած եմ, և խնդրեց որ նստի, ինքն քնացընէր զանկիւյ վայրկեան մը մէջ: Սակաւ ժամանակէ ետքը մտայ Վալըէրին սենեակը, և կրցայ դիտել այդ զէպքը: Մարդը նստած էր, Վալըէրին մատին վրայ սեւեռելով աչքերը, իսկ Վալըէր ոտքի վրայ՝ աջակողմը կեցեր էր, և անդադար քնանալէ ձեքակայիս աչաց կը մայէր: Ես զբաղեցայ այն միջոցին իմ գործիս, և քիչ վերջը վերադառնալով՝ զՎալըէր նոյն դրից մէջ գտայ, և ինքն խորիկ կերպով քնացեր էր, բռնեղն ու մատաղ փայտաշաժի պէս էին, իսկ այցելու ենթակայն արթուն էր, և աչքը սեւեռած էր Վալըէրին մատին վրայ »:

Աւաստի անձ մը՝ որ հակառակ իւր կամաց քնացեր է. սատի յայտնի է՝ թէ քաջ և փորձ մագնիսացընող մը կրնայ դիւրաւ քնացընել զգայուն մարդ մը, ասոր հակառակելով հանդերձ:

Շարայարեյի

Հ. Ս. ՍԱՐԵՆՍ

1. De la suggestion mentale, p. 359.

2. Neurypnologie, p. 41.